# ՍՏՈՒԳԵ՛Ք ՁԵՐ ՏԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

- Մեր ընտանիքում բոլորը համաձայն են, որ կիբերհետապնդումն ընդունելի երևույթ չէ: ԱՅՈ ՈՉ
- Իմ ծնողները ներգրավված են ծնողական միություններում և արդեն քննարկել են՝ ինչպես կանխարգելել կիբերհետապնդումները դպրոցում: ԱՅՈ ՈՉ
- Ես միայն ինձ ծանոթ մարդկանց եմ տալիս իմ էլեկտրոնային հասցեները և բջջային հեռախոսի համարնը: ԱՅՈ ՈՉ
- Ես արգելափակում եմ հաղորդագրություն ուղարկող այն անձանց տվյալները, որոնք անցանկալի են իմ հասցեացուցակում: ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք մարդկանց չեմ փոխանցում այնպիսի հաղորդագրություններ կամ նկարներ, որոնք կարող են վիրավորել նրանց: ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք վեբ խցիկ չեմ օգտագործում, երբ շփվում եմ անծանոթ մարդկանց հետ: ԱՅՈ ՈՉ
- Գաղտնաբառերը գաղտնիք են. մենք դրանք երբեք այլ անձանց չենք փոխանցում: ԱՅՈ ՈՉ
- Ես երբեք չեմ պատասխանի կիբեր խուլիգանի կողմից ուղարկված հաղորդագրությանը: ԱՅՈ ՈՉ
- Գիտե՞ս արդյոք հայկական այնպիսի լավ կայք, որտեղից կարող ես իմանալ՝ ինչպես արձագանքել կիբերհետապնդումներին ԱՅՈ ՈՉ
- Եթե իմ կամ ընկերներիցս որևէ մեկի դեմ իրականացվի կիբերհետապնդում, ես այդ մասին կհայտնեմ ամենաքիչը մեկ մեծահասակի: ԱՅՈ ՈՉ

## Քանի՞ դրական պատասխան ունես

***9-ից 10 դրական պատասխան.*** Շնորհավորում ենք: Դու իսկական չեմպիոն ես: Շարունակի՛ր ակտիվ գործունեությունդ և հետևի՛ր www.webwise.ie և www.safe.am կայքերում հրապարակվող վերջին նորություններին:

***6-ից 8 դրական պատասխան.*** շատ լավ է: Երևում է, որ մտահոգվում ես կիբերհետապնդումների խնդրով: Քեզ հարկավոր է ավելին իմանալ այս իրավիճակում ճիշտ վարվելու կանոնների մասին: Խոսի՛ր որևէ մեծահասակի հետ կամ այցելի՛ր www.webwise.ie և www.safe.am կայքերը:

***6-ից քիչ դրական պատասխան.*** քեզ հարկավոր է կատարելագործել քո գիտելիքները: Համացանցում կարող ես նավարկել հաճույքի համար կամ ուսուցողական նյութեր գտնելու նպատակով, բայց պետք է անպայման իմանաս անվտանգության կանոնները: Մի՛ մոռացիր այցելել www.webwise.ie և www.safe.am կայքերը: